# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ըստ Բարձր Հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց պատուիրի ամենից ուսուցչաց և ուսուցչուհեաց եկեղեցական–ծխական ուսումնարանաց Հայոց, զի որք ընդ խնդրագրութեանց իւրեանց յանուն Վեհափառ Հայրապետի չեն մատուցեալ զվկայականս ուսման իւրեանց յանցելում ամի և կամ ստացեալ են յետոյ, ի դէպս կարևորութեան այնոցիկ զվաւերացեալ պատճէնս նոցին պահեսցեն առ իւրեանս, իսկ զիսկականսն անշուշտ փութասցեն մատուցանել Նորին Սրբութեան ընդ ձեռն Թեմական Առաջնորդաց ց 1 յառաջիկայ յուլիսի, նոյնպէս արասցեն և նոքա, որք յայսմհետէ ցանկասցեն ի ձեռս բերել զիրաւունս ուսուցչութեան յեկեղեցական—ծխական ուսումնարանս Հայոց։

Մամուլի տակից դուրս եկաւ «Ձայնքաղ Շարականը» և Յուսիկ Վ. Մովսէսեանցի «Դասատետր Կրօնի» Ա. Բ. և Գ. տարիները·

Ցանկացողները կարող են դիմել Տպարանական ժողովին ի Ս. Էջմիածին· Въ Эчміадзинскій типографическій Комитетъ, въ Вагаршапатъ·